

Կիլիկիոյ Կոստանդին Գ. - Լեւոն Բռնակալ - Կոստանդին Դ.ի կարեւոր դրամագիւտ մը

ԶԱՐԵՀ ՊՏՈՒԿԵԱՆ

Այս յօդուածին նպատակն է ներկայացնել կարեւոր դրամագիւտի մը ուսումնասիրութիւնը: Այս դրամագիւտը կը հաստատէ Լեւոնի (Բռնակալ) մը Թագաւորութիւնը եւ անոր դրամ հատանքը եւ նաեւ յայտնի կ'ընէ Կոստանդին Գ.ի վերջին տարիներուն ու Կոստանդին Դ.ի առաջին տարիներուն դրամներու արուեստը, ինչպէս նաեւ անոնց կշիռն ու արծաթներու զտութիւնը: Կը ճշդութիւն եւ կը լուսարանուին նաեւ վերոյիշեալ երեք Թագաւորներու դրամագիտական հարցերը:

Դրամագիւտը, որ կը բաղկանայ 636 կտորներէ, գնուած է Պոլսոյ մէջ, տասը տարիներ առաջ, բայց անոր երբ եւ ուրիշ գտնուելը կը մնայ անծանօթ: Մօտ հինգ տարիներ առաջ դրամագիւտը ամբողջութեամբ եղաւ սեփականութիւնը Նիւ Նորքաբնակ դրամահաւաք եւ դրամագէտ Պր. Մ. Կէվրէկեանի, որ ազնուօրէն զայն տրամադրեց հեղինակին, ուսումնասիրութեան համար: Այս առիթով մեր մասնաւոր շնորհակալութիւնները կը յայտնենք Պր. Կէվրէկեանին, որ իր այս քայլով ազգային գանձ մը կորուստէ փրկեց: Դրամագիւտին փոքր մէկ մասը ներկայիս կը գտնուի Պր. Կէվրէկեանին եւ հեղինակին մօտ, իսկ մեծամասնութիւնը ցրուած է:

Այս շրջանի դրամները շատ տկար զարնուած ըլլալուն, անոնց պատկերահանումը չափազանց դժուար է: Գոհացուցիչ նկարներ պատրաստուեցան նախ դրամներուն դաճէ օրինակը պատրաստ-

տելով, եւ ապա՝ դաճերուն պատկերը հանելով: Այս առիթով մասնաւոր շնորհակալութիւններս ամերիկացի բարեկամիս՝ Mr. Edwin P. McIntyre-ի որ այս դժուարին դործը յաջողութեամբ կատարեց:

ԴՐԱՄԱԳԻՏԻՏԵՐՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Դրամագիտութիւնը շատ կարեւոր աղբիւր մըն է ազգի մը պատմութեան ուսումնասիրութեան համար: Հայկական դրամներու ուսումնասիրութիւնը մասնաւոր կարեւորութիւն կը ստանայ երբ նկատի առնենք որ մեր ազգին պատմական կոթողները մեծ մասամբ փճացած են քաղաքական աննպաստ պայմաններու հետեւանքով:

Պէտք է նկատի առնել որ մեր պատմութիւնը հիմնուած է հայ եւ օտար պատմադիրներու տեղեկագրութեանց վրայ: Օտարներ՝ հայոց վերաբերեալ դէպքերու մասին գրած են իրենց հայեացքով, արդարացնելով իրենց արարքները եւ շատ անգամ՝ նուաստացնելով հայոց քաղաքական դերը եւ յաջողութիւնները: Հայ գրչագիր պատմաբանները թիւով քիչ են եւ հաւանաբար անոնց գրութիւններէն շատերը կորսուած են ժամանակի ընթացքին, եւ կամ՝ ջնջուած թշնամիին կողմէ: Ասկէ դատ, երբ գերք մը կը հիննար, գրչագիր մը զայն կ'ընդօրինակէր, եւ այս առիթով նոր գրքին մէջ կը մտցուէին որոշ փոփոխութիւններ: Այսպէսով թէեւ անցեալի գրականութիւնը հիմքն է մեր պատմութեան, սակայն չենք կրնար անցեալի գրութիւնները ընդունիլ իբր բացարձակ ճշմարտութիւն:

Դրամագիտութիւնը բարեբախտաբար այս թերութիւններէն չի տառապիր: Երբ Տիգրանի մը եւ կամ Լեւոնի մը դրամը մեր ձեռքը առնենք, դիտենք որ այս դրամը հատանուած է այդ թագաւորին կողմէ, որոշ շրջանի մը ժամանակամիջոցին: Այդ դրամը ժամանակակից անփոփոխ յիշատակարան մըն է: Կը խօսի ճշմարտութեամբ եւ առանց չափազանցելու իր անունը կրող թագաւորին մասին: Եթէ բարձր արուեստով պատրաստուած է եւ արծաթի բարձր տոկոս ունի, ուրեմն, կը նշանակէ որ այդ թագաւորը եղած է զօրաւոր եւ ունեցած է բարդաւաճ երկիր մը: Եթէ այդ դրամէն շատ կը դուռնուի, ուրեմն թագաւորը տիրապետած է երկար տարիներ: Եթէ դրամը փոքր է, քիչ արծաթով եւ հազուադէպ, ուրեմն թագաւորը տիրած է կարճ ժամանակ մը եւ բոլորած է անփառունակ շրջան մը: Այս փաստերը կարելի չէ ժխտել, հոգ չէ թէ ինչ գրած ըլլան հին պատմագիրները:

Եթէ քննականօրէն ուսումնասիրենք Կիլիկեան Հայաստանի դրամները, կրնանք այդ իշխանապետութեան պատմութիւնը գրել,

նոյնիսկ եթէ ուրիշ պատմական աղբիւրներ դոյութիւն չունենային: Հիմնուած դրամներու վրայ, կրնանք թաղաւորներու յաջորդական տիրապետութիւնը հաստատել, տալ իւրաքանչիւր թաղաւորի տիրապետութեան մօտաւոր շրջանը, պետութեան տնտեսական վիճակը, եւն.: Եթէ տեսնենք թէ օտար դրութիւններ զարնուած են հայկական դրամներու վրայ, կրնանք եզրակացնել թէ թշնամին յարձակած է եւ յաջողած՝ տուգանք առնել հայերէն: Իսկ երբ կը տեսնենք Լեւոնի դրամը լատին գիրերով, կրնանք հետեւցնել որ ան լատին քաղաքներ դրաւած է եւ հատանած լատինատառ դրամներ:

Այսպէս, տարակոյս չկայ թէ դրամագիտութիւնը շատ կարեւոր է աղբի մը պատմութիւնը ուսումնասիրելու համար: Իր կարգին, դրամներու ուսումնասիրութիւնը կախեալ է դրամագիտներու քննական ուսումնասիրութեանց վրայ: Միայն դրամագիտները կրնան որոշապէս հաստատել թէ այս կամ այն դրամը ո՞ր թաղաւորին կը պատկանի եւ նոյնիսկ որոշ դրամ մը թաղաւորին իշխանութեան ո՞ր շրջանին մէջ հատանուած է: Կան բազմաթիւ պատմական անցքեր, որոնց ծանօթ ենք միայն դրամներու միջոցով:

ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏԵՐՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Ռուբինեան շրջանէն բազմաթիւ դրամագիտներ երեւան հանուած են բայց դժբախտաբար անոնց մեծամասնութիւնը ցրուած է առանց ուսումնասիրուելու: Ասիկա մեծ կորուստ մըն է հայ դրամագիտութեան համար: Եղած են մէկ երկու յիշատակումներ անցեալին մէջ, այսպէս՝ Սիպիւեան(1) իր գրքին մէջ կը յիշատակէ երկու դրամագիտներ, առանց անոնց պարունակութիւնը քննականօրէն նկարագրելու: Նոյնպէս Կարապետեան(2) դրած է Տաֆնէի նշանաւոր դրամագիտին մասին, առանց սակայն պարունակութիւնը մանրամասնօրէն ներկայացնելու:

1958 թ.ին, Հեթում-Չապէլի պատկանող երկու դրամագիտներ ընդարձակ եւ մանրամասն ուսումնասիրութեան ենթարկուեցան(3): Այս աշխատանքին հետեւանքով կարելի եղաւ Հեթում-Չա-

1) Հ. Կ. Սիպիւեան, Դասաւորութիւն Ռուբինեան Դրամոց, Վիեննա, 1892, էջ 10, 57:

2) Պ. Կարապետեան, Տաֆնէի Դրամագիտը, Հասկ Տաքսիքի, 1949-50, էջ 16-21:

3) P. Bedoukian, American Numismatic Society, Museum Notes, VIII, 1958, pp. 145-180, pl. XXXIX.

պէլի դրամներու զանազան տեսակները դասաւորել ժամանակագրական կարգով:

Ներկայիս հեղինակին քով կան մօտ քսան դրամագիւտերու արձանագրութիւնները: Ասոնցմէ թերեւս ամենէն հետաքրքրականն ու շահեկանը այս յօդուածին նիւթ եղող Կոստանդին Գ. — Լեւոն Բռնակալ — Կոստանդին Դ. 636 կտորներու դրամագիւտն է:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. — ԼԵՒՈՆ ԲՐՆԱԿԱԼ — ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. ԵՐՁԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ (1344 — 1373 թթ.)

Այս տարիները Կիլիկիոյ Թագաւորութեան անկման շրջանը կը ներկայացնեն: Նոյն ատեն ժամանակակից աղբիւրներ կը պակսին այս երեք Թագաւորներուն տիրապետութիւնը յստակօրէն ներկայացնելու համար:

Գիտենք որ Կի Թագաւորին սպանութենէն ետք, հայ իշխանները Թագաւոր ընտրեցին Կոստանդին անունով անձ մը, որ Նղըրեանց Պաղտինի որդին էր: Կոստանդին Թագաւորական ցեղէն չէր, բայց կը պատկանէր Կիլիկիոյ իշխանական զօրաւոր ընտանիքին: Ժամանակակից պատմագիրներ կը յիշատակեն զայն իբր հայոց Թագաւոր(4): Իսկ պատմութեան գիրքեր զայն կը յիշեն որպէս հայոց Թագաւոր, որ իշխեց (5,6) ամբողջ 19 տարիներ, ինչ որ խոտովուած շրջանին համար շատ երկար տեւող զահակալութիւն մըն է: Կոստանդին կը կոչուի երրորդ, քանի որ իր նախորդը՝ Կին, ճանչցուած է նաեւ իբր Կոստանդին Բ.: Ան իշխեց շրջանի մը մէջ, երբ երկիրը տեւականօրէն զօրաւոր թշնամիներու յարձակման ենթակայ էր, կը տառապէր կրօնական ներքին կռիւներով եւ կարծես այս բոլոր դժբախտութիւնները չէին բաւեր, ասիական ժանտախտը անցաւ Կիլիկիոյ վրայէն, տասանորդելով ժողովուրդին թիւը: Նկատի առնելով այս բոլոր տուեալները, պէտք է այն եզրակացութեան հասնինք որ Կոստանդին Գ. կարող անձ մըն էր, եւ կրցաւ երկիրը

4) Լ. Ս. Խաչիկեան, ԺԳ. Դարի Հայերէն Զեռագրերի Յիշատակարաններ, Նրնա, 1950, էջ 346: Գաբրիէլ Ա. Կաթողիկոս, Յիշատակարան Զեռագրաց, Ա. հտր., Ամբիլիաս, 1951, էջ 532: Վ. Ա. Յակոբեան, Մանր ժամանակագրութիւններ, Բ. հտր., Նրնա, 1956, էջ 204:

5) Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վեմետիկ, 1885, էջ 226, 273, 413, 520, 541-544:

6) W. H. Rudt-Collenberg, *The Rupenides, Hethumides and Lusignans*, Paris 1963, p. 87.

ամբողջ 19 տարիներ կառավարել ամենադժուարին պայմաններու տակ: Ան նոյնիսկ յաջողեցաւ Այասը վերադարձել 1347 թ.ին, բայց այս յաջողութիւնը կարճատեւ եղաւ եւ յաջորդ տարին Այասը վերջնականապէս անցաւ թշնամիին ձեռքը: Կոստանդինի վերջին շրջանին երկիրը նորէն ենթարկուեցաւ մահմետականներու յարձակումին, եւ Կիլիկիոյ քաղաքները կողոպուտի ենթարկուեցան: Երբ Կոստանդին մեռաւ 1363 թ.ին, երկիրը իսկապէս ծանր դրութեան մէջ էր:

Այնպէս կ'երեւի թէ այս թաղաւորին մահէն ետք անոր յաջորդեց իր որդին, թէեւ այս մասին ժամանակակից պատմիչները բացարձակ լռութիւն կը պահեն: Բասմաշեան(7) կ'ամփոփէ այս ժամանակամիջոցի պատմական աղբիւրները եւ կը ներկայացնէ Լեւոն մը, որ Կոստանդինի որդին էր եւ գահին տիրեց 1363-1365 թթ. իբր թաղաւոր հայոց: Ամենակարեւոր վկայութիւնը կը գտնենք 1345 թ.ին Կոստանդին Գ.ի կողմէ գրուած յիշատակարանի մը մէջ: Այս գրութիւնը կ'արժէ հոս ներկայացնել ամբողջութեամբ:

«Ի թուականութեանս հայոց 927 եւ Կոստանդին հայոց արքայ ստացայ զսուրբ աւետարանս, որ է կազմեալ արծաթեղէն եւ ոսկեղէն, նըկարակերպ գեղեցկութեամբ զարդարեալ, որ եւ ստացայ զսա յարմար արդեանց իմոց, զոր յառաջին նախնեաց մերոց հասեալ եղեւ առ մեզ նշան բարեաց, եւ նովաւ ետու զսուրբ աւետարանս ծածկեալ գեղեցիկ կերպարանաւք, եւ շնորհեսցի զսա սըրբոյ եկեղեցւոյ ըստ փափաքանաց սրտի իմոյ եւ մեծ յուսոյ, միշտ յիշատակ լինել ինձ եւ ամենայն զարմից իմոց եւ հաւրն իմոյ Տէր Պաղտին մարաշխատուն հանգուցելոյն առ Քրիստոս, այլ եւ վասն յերկար կենդանութեան մերոյ եւ աստուածապարգեւ որդւոյն Աւշնի եւ Լէոնի»(8):

Ինչպէս Բասմաշեան կը գրէ, այս Լեւոնն է, որ իր հօրը մահուանէն ետք գրաւեց գահը, իբրեւ օրինաւոր ժառանգորդ:

Այս Լեւոնին մասին Ալիշան կ'ակնարկէ քանի մը անգամ: Այսպէս, «ըստ ոմանց Լեւոն ոմն կորզէ զթագն, այլ խոտեալ 'ի բաց մերժի» եւ կ'աւելցնէ ծանօթութիւն մը Աւետիք Ամտեցիէն. «Յեղեւ թաղաւոր Լեւոն մ'այլ, խոչընտակ Կոստանդեայ, եւ խոռվութիւն ոչ սակաւ ընդ միմեանս»(9):

7) Կ. Յ. Բասմաշեան, Լեւոն Ե. Լուսինեան, Բաքի, 1908, էջ 20-29:

8) Recueil des Historiens Croisades, Documents Armeniens, vol. II. Paris 1906, p. 707.

9) Ալիշան, Սիսուան, էջ 544:

Բասմաջեան կը յիշատակէ նաեւ յոյն ժամանակագիր Մաքի-րասի գրածը, թէ՛ 1360 թ.ին, Հայոց Թագաւորութիւնը Լեւոնի մը ձեռքն էր, որ ընդամէնը «200 քաղաք եւ ամրութիւն» ունէր, բայց բոլորն ալ կորսնցուց(10): Հակառակ տարեթիւի քանի մը տարի տարբերութեան, շատ հաւանական է որ այս Լեւոնը Կոստանդինի յաջորդն էր:

Ուրբանոս Ե. Պապը իր նամակին մէջ կը յիշատակէ Լեւոն մը, որ դահին վրայ նստած էր 1363-1364 թթ.ուն, որ դահնկալ եղած էր(11):

Նոյն ատեն Ալիշան չ'ընդունիր, թէ այս Լեւոնը Կոստանդինի որդին է, քանի որ կը գրէ թէ «Սրածութիւն 'ի Սիս, բազում պարոնայք և քահանայք և արքայորդիքն մեռանին» 1357 թ.ին(12). Իսկ ուրիշ տեղ կը գրէ թէ Կոստանդին ժառանգ չձգեց. «կու մեռնէր 1363 թուականին՝ չթողլով ժառանգ արու. վասն զի իր երկու որդեակն, Օշին եւ Լեւոն, ապագայ մատաղ յոյս Հայոց, հօրերնուն աչքին առջեւ մեռած էին»(13): Թերեւս սակայն Կոստանդին ունէր ողջ ուրիշ որդիներ, քանի որ «էին նորա որդիք բազումք», ինչպէս կը գրէ Դարդեւ(14):

Այս Լեւոնի Թագաւորութիւնը դեռ ուսումնասիրութեան կարօտ է, եւ ընդհանրապէս Հայոց պատմութեան գիրքերը կը խուսափին զայն յիշելէ: Նոյն իսկ Րուտ-Քօլէնպէրկի(15) գիրքը որ նուիրուած է Կիլիկիան Հայաստանի Թագաւորական տոհմերու ազգագրական ճիւղերու ուսումնասիրութեան, չի յիշատակեր այս Լեւոնը:

Սակայն ինչպէս կը տեսնենք, դրամագիտութիւնը որոշապէս կը հաստատէ թէ Կոստանդին Գ.ի կը յաջորդէ Լեւոնը եւ անոր կը յաջորդէ Կոստանդին Դ. Թագաւորը: Ընդունելով այս փաստը, անհասկնալի է թէ ինչո՞ւ զայն կը կոչենք Լեւոն Բռնակալ, քանի որ օրինաւոր դրամ հաստանած է իբր օրինաւոր Թագաւոր՝ միւս Թագաւորներու կարգին: Կարապետեան(16) բոլոր Լեւոն գրութեամբ դրամները տուած է 1363-1365 թթ.ուն իշխող Լեւոնին եւ Թերեւս

10) Բասմաջեան, Լեւոն Ե. Լուսինեան, էջ 24, Ծանօթութիւն:

11) Rudt-Collenberg, *The Rupenides*,, p. 76.

12) Ալիշան, Սիսուան, էջ 560:

13) Հ. Ղեւոնդ Ալիշան, Հայ վեհեա, Վեհաքի, 1896, էջ 130-131:

14) R. H. C. D. A., vol. II, p. 58-59.

15) Rudt-Collenberg, *The Rupenides* . . . , p. 87.

16) Պ. Կարապետեան, «Բագմավէպ», 1962, էջ 167:

հետեւելով Ալիշանի կարծիքին, դայն կոչած է Լեւոն Բոնակալ: Այս կոչումը կը մնայ մինչեւ որ պատմական կէտերը ամբողջապէս լուսարանուին:

Լեւոն Բոնակալը իշխեց միայն երկու տարի եւ չենք գիտեր թէ ինչ պարագաներու տակ ան հրաժարեցաւ զահէն: Գիտենք որ անոր յաջորդեց Կոստանդին Դ., որ Նեղրի Հեթում Զամբուլանի որդին էր:

Կոստանդին Դ. կ'իշխէր փոքր երկրամասի մը վրայ, որ միշտ թշնամիներու յարձակման ենթակայ էր: Արեւելքի միակ զօրաւոր քրիստոնեայ թագաւորը Կիպրոսի Պետրոս Ա.ն էր: Կոստանդին քանիցս ջանաց անոր օգնութեամբ իր գերքը ամբապնդել, եւ թէեւ 1367 թ.ին Պետրոս յաջողեցաւ Այասը գրաւել, Կոստանդին չկրցաւ Պետրոսի միանալ, որովհետեւ Սիսի եւ Այասի միջեւ գտնուող դաշտային Կիլիկիան թշնամիին ձեռքն էր: Կացութիւնը այնքան ծանր էր, որ յաջորդ տարին հայերը դահը առաջարկեցին Պետրոսի, յուսալով որ անոր օգնութեամբ քաղաքական կացութիւնը կը բարելաւուի: Սակայն Պետրոս սպաննուեցաւ 1369 թ.ին, եւ այսպէս բնաւ հայոց թագաւոր չկարգուեցաւ:

Տարի մը ետք թշնամին յաջողեցաւ Սիսը կրակի տալ, բայց կ'երեւի միջնարբերդը մնաց հայոց ձեռքը, որովհետեւ դրամահատութիւնը շարունակուեցաւ, եւ հայեր շուտով վերստին տիրացան Սիսի: Ճարահատ, հայերը Կիպրոսի Պետրոս Բ. թագաւորին դիմեցին որ Կի թագաւորին եղբորորդին (որ Կիպրոս կը գտնուէր) դայ Սիս եւ պսակուի հայոց թագաւոր: Կոստանդին Դ. սպաննուեցաւ 1373 թ.ի Ապրիլին(17) եւ յաջորդ տարին Լեւոն եկաւ Սիս ու պսակուեցաւ թագաւոր հայոց:

Կոստանդին Դ.ի մասին Դարդեւ(18) քանի մը տող ունի, բայց դրած է երկարօրէն Կիպրոսի թագաւորին հայոց թագաւոր կարգուելու ջանքերուն մասին: Պէտք է նկատի առնենք որ Դարդեւ լատին մըն էր եւ լատին Լեւոն Ե. Լուսինեանի խոստովանահայրը: Ան Կիլիկիոյ պատմութիւնը գրած է լատին հայեացքով, եւ ի նպաստ՝ լատին շահերու:

Իսկութեան մէջ Կոստանդին Դ. այդքան ալ անկարող կամ վատթար մէկը չէր կրնար եղած ըլլալ, ինչպէս կը յիշատակուի պատմութեան գիրքերուն մէջ: Ան ինը տարիներ շարունակաբար

17) Ալիշան, Սիսուան, էջ 544:

18) R. H. C. O. A., vol. II, p. 36.

իշխեց ամենադժուարին պարագաներու տակ: Ան թէ իմաստութիւնը եւ թէ վեհութիւնը ունեցաւ դաճը Կիպրոսի թագաւորին տալու, պայմանով որ ան Կիլիկիոյ օգնութեան դար: Ան շարունակ դրամ հատանեց, ապացուցանելով երկրին կարգապահ գոյատեւումը:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. – ԼԵԻՈՆ ԲՈՒՆԱԿԱՆ – ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ

Սիպիւեան առաջին դիտնականն էր որ հայ դրամագիտութիւնը դրաւ հաստատուն հիմերու վրայ, եւ իր գիրքը մինչեւ այսօր կը նկատուի կարեւոր հրատարակութիւն մը: Սակայն Սիպիւեան չէ կարողացած Կոստանդին Գ.ի եւ Դ.ի դրամները իրարմէ զանազանել(19): Ան Կոստանդին Գ.ի կու տայ միայն քանի մը հազուադէպ դրամներ, հակառակ անոր որ ան տիրեց ամբողջ 19 տարիներ. իսկ Կոստանդին Դ.ի կու տայ միւս բոլոր «Կոստանդին» դրութեամբ դրամները, հակառակ որ այս վերջինը տիրեց միայն 8 տարիներ: Երկու Կոստանդիններու դրամները իրարմէ զանազանելը շատ դժուար է, որովհետեւ այս երկուքը յաջորդաբար իշխած ըլլալուն՝ իրենց դրամներու արուեստը իրարու շատ կը նմանի: Այս առեղծուածին բանալին գտնուեցաւ 1954 թ.ին(20), երբ յայտնի եղաւ որ Կոստանդին Գ.ի դրամները աւելի արծաթ պարունակելով, անոնց համեմատական կշիռը (specific gravity) 9.50-էն բարձր էր, իսկ Կոստանդին Դ.ը՝ ընդհանրապէս 9.30-էն ցած: Այս թիւերը պարզօրէն կը ցոլացնէին Կոստանդին Դ.ի դրամներուն աւելի քիչ արծաթ ունենալը: Տեսնուեցաւ նաեւ որ ընդհանրապէս Կոստանդին Գ.ի դրամներու դաշտին մէջ կային օղակներ, կէտեր, գրբեր, եւն., իսկ Կոստանդին Դ.ի դրամները ունին երկու կողմը Լ-ի կամ Տ-ի նման գրբեր: Նկատելի է նաեւ Տարսոնի մէջ հատանուած Կոստանդին դրամները, որոնք անշուշտ Գ.ի պէտք է տալ, ունին օղակ մը դաշտին մէջ եւ այս դրամներուն համեմատական կշիռը 9.5-էն վեր է: Հետաքրքրական է նաեւ նկատի առնել որ Կոստանդին Դ.ի դրամներու երկրորդ կողմը ընդհանրապէս ՇԻՆԵԱՆ (կամ ՇԻՆԱՆ) Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ գրուած է ամբողջապէս. իսկ Կոստանդին Գ.ի դրամներու վրայ այս գրութիւնը կրճատուած է: Այս տուեալները նկատի առնելով հեշտութեամբ կրնանք այս երկու Կոստանդիններու դրամները իրարմէ զանազանել: Կան նաեւ Կոս-

19) Հ. Կ. Սիպիւեան, Դասակարգութիւն Ռուբէնեան Դրամոց, էջ 10, 57:

20) P. Bedoukian, American Numismatic Society, Museum Notes, VIII, 1958, pp. 145-180, pl. XXXIX.

տանդին Դ.ի պղինձ եւ կամ շատ քիչ արծաթ պարունակող դրամներ(21), զորս Սեքուլեան կը նախընտրէ կոշեւ արծաթապղինձ(22):

Հակառակ Սեքուլեանի թելադրութեան, այս դրամները որ թ դիրը ունին դաշտին մէջ, կը պատկանին Կոստանդին Դ.ի, ինչպէս կ'ապացուցանուի մեր դրամագիտի քննութեամբ: Այս դրամագիտէն կը պարզուի որ թէ՛ Լեւոն Բռնակալ եւ թէ՛ Կոստանդին Դ. հատանած են այս թ դիրով պղինձ(23) կամ արծաթապղինձ(24) դրամները: Այս դրամները կամ որոշ անձուկ շրջանի մը մէջ հատանուած դրամներ են, երբ արծաթը կը պակսէր, եւ կամ՝ Սեքուլեանի կոչած արծաթապղինձներ էին, տարբերելով արծաթներէն: Այս հարցը դեռ լուսարանուած չէ, բայց անոնք իբր պղինձ դրամ չէին գործածուեր, քանի որ վերջերս այս թաղաւորներուն զուտ պղինձներն ալ գտնուեցան(25):

Սիպիլեան(26) կը գրէ թէ 1874 թ.ին, Կիլիկիայի եւ Գոնիայի մէջտեղերը 120-ի չափ արծաթ դրամներ գտնուեցան, որոնք կը պատկանէին Օշինի (11 հատ), Լեւոն Դ.ի (38 հատ), Լեւոնի (17 հատ), Կիլի (8 հատ), Կոստանդին Դ.ի Տարսոն հատանուած (4 հատ) եւ 35 հատ ուրիշ Կոստանդիններ: Սիպիլեան կը գրէ թէ Լեւոն ընթերցուածով դրամները շատ կը նմանին Կոստանդին ընթերցուած դրամներուն եւ կը պատկանին նոյն շրջանին, եւ այս Լեւոն դրամները կ'ընծայէ Լեւոն Դ.ի(27): Պէտք է յիշել սակայն որ Սիպիլեան ծանօթ էր Լեւոնի մը գոյութեան, որ իշխեց 1363-1365 թթ.ուն, բայց կ'ըսէ թէ ան դրամ չունի(28): Որքան որ դիտենք,

21) Զ. Պտուկեան, Կիլիկեան Հայաստանի Դրամները, Վիեննա, 1963, էջ 406-408:

22) Հ. Զ. Սեֆուլեան, Վիեննայի Միւթարեան Թանգարանի Կոստանդին Դ. - Լեւոն Ե. Դրամները, Վիեննա, 1971, էջ 4:

23) Զ. Պտուկեան, Կիլիկեան Հայաստանի Դրամները, էջ 398-399, 406-408:

24) Հ. Զ. Սեֆուլեան, Վիեննայի Միւթարեան Թանգարանի..., էջ 4:

25) Paul Z. Bedoukian, *The Copper Coins of the Later Kings of Cilician Armenia*, ANS Museum Notes, 15, 1969, pp. 131-135. pl. XXII. Այս յօդուածը սխալ տպուած է «Համդէս Ամսօրիայ»ի մէջ (1969, քիւ 7-9, էջ 351-355) եւ Հ. Զ. Սեֆուլեան (էջ 5) այս սխալ տպագրութեամբ վրայ հիմնուելով ինծի կը վերագրէ բալորովիմ սխալ եւ ամսեղի տեսութիւններ: Խնդիրը կը պարզուի վերայիշեալ յօդուածիս ամփոփումը քննելէ կարգաւորով:

26) Հ. Կ. Սիպիլեան, Դասաւորութիւն Ռուբէնեան Դրամոց, էջ 57:

27) Նայմը, էջ 58:

28) Նայմը, էջ 85:

Կարապետեան(29) առաջինն էր որ ԼԵՎՈՆ գրութեամբ դրամները վերագրեց Լեւոն Բոնակալին եւ հետագային երեւան ելած փաստե-
բը հաստատեցին անոր կարծիքը: Ներկայ դրամագիւտին ուսում-
նասիրութիւնը կը լուսաբանէ նաեւ որոշ շփոթութիւններ(30):

Միջնադարուն եւ Կիլիկեան շրջանին, դրամահատութիւնը այդքան հաստատուած սխտեմաքիֆ ճարտարարուեստ մը չէր: Դրամի կնիք պատրաստողները մասնազէտ գեղարուեստագէտներ չէին: Կը գրէին իրենց կարողութեան չափով եւ շատ անգամ ան-
կատար: Այս պատճառով ամէն կնիք կը տարբերէր միւսներէն թէ
գրութեամբ եւ թէ արուեստով: Ճիշդ է որ ամէն շրջան իր չափը,
ձեւը եւ արուեստը ունէր որ կը ցոլացնէր ժամանակի կացութիւնը
եւ փողերանոցին վիճակը: Դրամին ձեւը, արուեստը, կշիռը, եւն.,
շատ անգամ շատ աւելի կարեւոր են քան փոքր դարձողութիւններ՝
գրութեանց մէջ: Այսպէս, թէեւ գիտենք որ ԼԵՎՈՆ գրութեամբ
դրամները կը պատկանին Լեւոն Բոնակալին, չենք կրնար բացար-
ձակօրէն յայտարարել թէ բոլոր ԼԵՎՈՆ գրութեամբ դրամները
անպայման Լեւոն Բոնակալին պէտք է տալ: Այսպէս, իշխան Լե-
ւոն Բ.ի դրամին վրայ գրուած է ԼԵՎՈՆ ԾԱՌԱ ԱՄ – ՈՐԴԻ ՍՏԵ-
ՓԱՆԷԻ, բայց ոչ ոք այս դրամը կու տայ Լեւոն Բոնակալի, որով-
հետեւ ան գրուած է Վ-ով: Նոյնպէս եթէ Լեւոն Ե.ի փոքր պղինձ
մը գտնենք(31), որուն վրայ յստակօրէն գրուած է ԼԵՎՈՆ, այդ
դրամը չենք կրնար Լեւոն Բոնակալի վերագրել, քանի որ Կիւրոսի
Լուսինեան առիւծը կը տեսնենք այդ դրամին վրայ, որ յար եւ
նման է Լեւոն Ե.ի պղինձներուն: Ասիկա պարզապէս կը նշանակէ
սր կնիքը պատրաստողը սխալած է:

Նոյնպէս՝ եթէ խոշոր դրամագիւտի մը մէջ տեսնենք մեծ
թիւով ԼԵՎՈՆ դրամներ, եւ նոյն արուեստով քանի մը ԼԵՒՈՆ
դրամներ, այս ԼԵՒՈՆ դրամները պէտք է տանք Լեւոն Բոնակալի եւ
ոչ թէ Լեւոն Ե.ի, քանի որ դրամագիւտը որեւէ Լեւոն Ե.ի դրամ
չի պարունակեր: Կը տեսնենք որ մեր դրամագիւտը ունի 8 հատ ԼԵ-
ՒՈՆ գրուածքով դրամներ, 42 ԼԵՎՈՆ-ներու շարքին: Ասոնք անտա-
րակոյս կը պատկանին ԼԵՒՈՆ Բոնակալին. եւ գրութեան տարբե-
րութիւնը պարզապէս փորագրիչին սխալն է: Այս փաստերուն վրայ

29) Պ. Կարապետեան, «Բազմավէպ», 1952, էջ 167:

30) Հ. Կ. Սեֆուլեան, Վիեննայի Միթթաբեան Թանգարանի...:

31) Այս տեսակ պղինձ ամուրի գրամ մը կը գտնուի Պր. Յ. Կեվրէկեանի

Հիմնուելով պէտք է մերժել թէ՛ Սիպիւեանի՝ զանոնք Լեւոն Դ-ի վերադրելը, եւ թէ՛ Սեքուլեանի՝ Լեւոն Ե-ին վերադրելը (32) :

Կոստանդին Դ-ի դրամներու մասին խօսեցանք վերը Կոստանդին Գ-ի դրամներու կարգին : Այս երկու թագաւորներուն դրամները իրարմէ զանազանելու այլեւս դժուարութիւն մը չի ներկայացներ :

Այս շրջանի դրամները կը ցոլացնեն քաղաքական կացութիւնը եւ ընդհանրապէս ցածորակ արուեստով շինուած են : Ասկէ զատ՝ քիչ արծաթ պարունակելուն համար անոնք գորշ գոյն մը ունին : Յայտնի է որ հապճեպով եւ մեծաքանակ հատանուած ըլլալուն համար շատ քիչ կարեւորութիւն տրուած է անոնց կերպարանքին :

ԴՐԱՄԱԳԻՏԻՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Տարակոյս չկայ որ այս 636 կտոր Կոստանդին Գ. – Լեւոն Բռնակալ – Կոստանդին Դ. դրամները կը կազմեն դրամադիւտ մը, այսինքն՝ ամէնը մէկ գտնուած որոշ եւ կարճ ժամանակամիջոցի դրամներ են : Այս յայտարարութիւնը վստահօրէն կրնանք ընել, որովհետեւ դրամադիւտին մէջ կը տեսնենք բազմաթիւ կտորներ, որոնք նոյն կնիքէն ելած են : Ասդիէն անդիէն մէկիկ մէկիկ հաւաքուած խումբի մը մէջ ընաւ կամ շատ քիչ նոյն կնիքէն ելած դրամներ կը գտնուին :

Կը տեսնենք նաեւ որ այս բոլոր 636 դրամները բաւական իրարու կը նմանին, նոյն գորշ գոյնով եւ արուեստով :

Դրամադիւտը հետեւեալ բաղադրութիւնը ունի. —

Կոստանդին Գ.	28	անորոշ-մաշած	3
Լեւոն Բռնակալ	42	անորոշ-մաշած	8
Կոստանդին Դ. Թ/Թ	55	անորոշ-մաշած	48
Կոստանդին Դ. Թ/	19	անորոշ-մաշած	34
Կոստանդին Դ. Տ/Տ	102	անորոշ-մաշած	208
Կոստանդին Դ. Լ/Լ	31	անորոշ-մաշած	33
Կոստանդին խառն դրեր	7		
Կոստանդին ձին ձախ	3		
Անորոշ դրամներ			15
Գումար	287		349
Ընդհանուր գումար	636		

32) Հ. Կ. Սիֆուլեամ, Վիեննայի Միլիթարեան Թանգարանի..., էջ 9-10:

Նշանակալից է որ այս դրամադեւտին մէջ չկան Տարսոն տպուած դրամներ: Զկան նաեւ բարձր արծաթ պարունակող դրամներ: Նկատելի է նաեւ որ Կոստանդին Դ-ի դրամներու թիւը քիչ է, 31 հատ կամ հազիւ հարիւրին հինգ: Այս կը նշանակէ որ դրամագիւտին Կոստանդին Դ-ի դրամները կը պատկանէին իր թագաւորութեան վերջին շրջանին: Կարելի է նաեւ որ այս բոլոր 636 դրամները կը պատկանէին որոշ շրջանի մը «արծաթապղինձ» դրամներու:

Լեւոն Բռնակալին բոլոր դրամներն ալ ունին թ դիրք, մինչդեռ հեղինակին գրքին մէջ յիշատակուած մօտ հարիւրէն միայն 11 հատը թ դիրք ունին(33), իսկ Սեբուլեանին ցանկին մէջ գտնուած 200 Լեվոններու մօտ 40-ը ունին թ դիրք(34): Թերեւս այս դրամները կը տարբերէին աւելի զուտ արծաթ դրամներէն:

Հետաքրքրական է նաեւ քննել Կոստանդին Դ-ի դրամները: Հաւանական է որ թ պարունակող դրամները սկզբնական շրջանին կը պատկանին, քանի որ ԼԵՎՈՆԻ նման թ դիրք ունին: Այս դրամներուն յաջորդած են Տ/Տ դրամները, որովհետեւ անոնք մեծամասնութիւնը կը կազմեն. իսկ Լ/Լ դրամները թերեւս աւելի վերջի շրջանին կը պատկանին, քանի որ աւելի փոքրաթիւ են: Այնպէս կ'երեւի թէ այս դրամները թաղուած են Կոստանդին Դ-ի թագաւորութեան վերջին շրջանին, երբ Լ/Լ դրամները կը հատանէին Սիսի փողերանոցին մէջ: Հեղինակին գրքին մէջ(35) կը տեսնուին դրեթէ հաւասար թիւով Լ/Լ եւ Տ/Տ դրամներ: Նոյնը կարելի է ըսել Սեբուլեանի յիշատակած բազմաթիւ Կոստանդին Դ-ի դրամներու մասին(36): Եթէ ենթադրենք որ Կոստանդին Դ-ի թագաւորութեան ժամանակ նախ Տ/Տ եւ յետոյ Լ/Լ դրամներ հատանած են, այն ատեն իր առաջին չորս տարուան միջոցին հատանած է Լ/Լ դրամները: Այս հաշիւով, դրամագիւտը թերեւս կը պարունակէ առաջին չորս տարիներու Տ/Տ դրամները, եւ մէկ տարուան ալ Լ/Լ դրամները: Այս նկատումով կրնանք ենթադրել որ այս դրամագիւտը թաղուած է Կոստանդին Դ-ի թագաւորութեան հինգերորդ տարւոյն մէջ, այսինքն՝ 1370 թ.ին:

Քորփուսին դրամները ներկայացուած են ժամանակագրական կարգով եւ թուականօրէն: Ուր որ կարելի է, Պտուկեանի քորփուսին թիւը տրուած է երկրորդ սիւնակին մէջ: Անկէ վերջ տըր-

33) Զ. Պտուկեան, Կիլիկեան Հայաստանի Դրամները, էջ 395-399:

34) Հ. Կ. Սեբուլեան, Վիեննայի Միութեան Թանգարանի..., էջ 44-45:

35) Զ. Պտուկեան, Կիլիկեան Հայաստանի Դրամները, էջ 399-406:

36) Հ. Կ. Սեբուլեան, Վիեննայի Միութեան Թանգարանի..., էջ 57-84:

ուած է Ա. եւ Բ. կողմի դրութիւնը: Յաջորդ սիւնակին մէջ տըր-
ուած է այդ դրամին ո՛ր կնիքով կոխուած ըլլալը: Յայտնի է որ
բազմաթիւ դրամներ նոյն կնիքէն ելած են: Վերջին սիւնակին մէջ
տրուած են դաշտի նշանները եւ անոնց ուր դտնուելը (տես երկու
զծադրութիւնները որ կը լուսարանեն այս կէտը):

Երկու տախտակները կը ներկայացնեն դրամադիւտին զա-
նազան դրամները:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այս դրամադիւտը հաստատապէս կ'ապացուցանէ թէ Կիլի-
կիոյ Կոստանդին Գ.ի յաջորդած է Լեոն մը, որ օրինաւորապէս
շարունակած է դրամահատութիւնը:


Կը հաստատուի նաեւ որ Կոստանդին Գ. — Լեոն Բոնակալ
եւ Կոստանդին Դ. թագաւորները հատանած են քիչ արծաթ պա-
րունակող դրամներ, որոնք հաւանաբար արժէքով կը տարբերէին
արծաթ դրամներէն: Նշանակելի է որ այս դրամադիւտի 636 դրամ-
ներուն մէջ ոչ մէկ հատ լաւ արծաթ դրամ կար:

Սկսելով Կի թագաւորէն՝ դրամներու դաշտին մէջ կը տեսնուի
օղակ մը կամ կէտեր: Այս նշանները կը շարունակուին անոր յա-
ջորդող Կոստանդին Գ.ի եւ Լեոն Բոնակալի դրամներուն վրայ:
Լեոն Բոնակալէն սկսեալ դաշտին մէջ կը տեսնենք թ գիրը, որ
կը շարունակուի Կոստանդին Գ.ի դրամներուն վրայ: Դաշտին մէջ
թ գիրը ունեցող Կոստանդին Գ.ի դրամ չկայ(37):


Կը տեսնուի նաեւ որ Լեոն Բոնակալի արուեստով բայց Լե-
ոն զրութեամբ դրամները կը պատկանին Լեոն Բոնակալի եւ ոչ
թէ Լուսինեան Լեոն Ե.ի, որուն դրամները բոլորովին տարբեր
արուեստ ունին(38):

37) Այս մկատումներով Հ. Կ. Սեֆուլեամի (էջ 40) թ գիրը ունեցող Կոս-
տանդինի արծաթապղնձները պէտք է վերադարձուին Կոստանդին Գ.ի:


38) Այս դրամագիւտը կը ժխտէ Հ. Կ. Սեֆուլեամի կարծիքը, քէ՛ այս
դրամները կը պատկանին Լեոն Ե.ի (տես՝ Հ. Կ. Սեֆուլեամ, էջ 9 եւ 85):




ԴԱՇՏԻ ՆՇԱՆԸ Թ-Դ



ԴԱՇՏԻ ՆՇԱՆԸ Տ-Տ





ԴՐԱՄԱԳԻՏԻՆ ՔՈՐՓՈՒՍԸ

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ

Պատկերաց

Թիւ Բարբառութի Թիւ

Կգիք

1Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳՐ ՀԱ	Օղակ ձախ դաշտին մէջ
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ	Մազոտ առիւծ
2Ա	նոյն	1Ա
Բ	նոյն	1Բ
3Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳՐ ՀՈՑ	Օղակ ձախ դաշտին մէջ
	ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻ	Առիւծը աջ
	1.9565 կրամ Հ. Կ. 9.24	
4Ա	նոյն	3Ա
	նոյն	3Բ
5Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳՐ ՀՈՑ	3Ա
Բ	ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ	Օղակ ձախ դաշտին մէջ
	2.050 կրամ Հ. Կ. 9.23	Առիւծը աջ
6Ա	նոյն	3Ա
Բ	նոյն	4Բ
7Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ Հ	Օղակ ձախ դաշտին մէջ
Բ	ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ	Մազոտ առիւծ
8Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ Հ	Օղակ ձախ դաշտին մէջ
Բ	ՇԻՆԱԼ ՔԱՂԱՔ ՍԻՍ	Առիւծը աջ
9Ա	նոյն	Օղակ ձախ դաշտին մէջ
Բ	ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ս	Առիւծը աջ
10Ա	նոյն	9Ա
Բ	նոյն	
11Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ	Օղակ ձախ դաշտին մէջ
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ	Առիւծը աջ
	2.125 կրամ Հ. Կ. 9.27	
12Ա	ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳՐ ՀՈՑ	Առանց օղակի
Բ	ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ	Մազոտ առիւծ
13Ա	ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳՐ ՈՑ	Առանց օղակի
Բ	ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ	Ծ Գիւրը առիւծին յետին ոտքերուն միջեւ

14Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ Հ	Առանց օղակի
Բ	ՇԻՆԵԱՒ Ի ԳԱՂԳՆ Ի	Առիւծը աջ
15Ա	նոյն	14Ա
Բ	ՇԻՆԵԱՒ Ի ԳԱՂԳՆ Ի ՍԻՍ	Առիւծը աջ
16Ա	2106 ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ Հ	Առանց օղակի
	ՇԻՆԵԱՒ Ի ՔԱՂՔՆ Ի ՍԻՍ	Առիւծը աջ
17Ա	նոյն	16Ա
Բ	նոյն	Մազոտ առիւծ
18Ա	նոյն	16Ա
Բ	ՇԻՆԱՒ Ի ՔԱՂՔՆ Ի ՍԻ	Առանց օղակի
19Ա	նոյն	Առիւծը աջ
Բ	Անորոշ	17Բ
20Ա	նոյն	19Ա
Բ	ՇԻՆԵԱՒ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍՍ	Առանց օղակի
		Մազոտ առիւծ
21Ա	նոյն	19Ա
Բ	նոյն	20Բ
22Ա	2103 ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀՅ	Լ գիրը ձիուն յետին
Բ	ՇԻՆԵԱ ՔԱՂՔՆ Ի ՍԻՍ Ն	ոտքերուն միջեւ
		Լ գիրը առիւծին յետին
23Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՀՈՑ	Օղակ ձախ դաշտին մէջ
Բ	ՇԻՆԵԱ ՔԱՂՔՆ ՍԻՍ	Մազոտ առիւծ
24Ա	նոյն	Օղակ ձախ դաշտին մէջ
Բ	նոյն	Առիւծը աջ
25Ա	2108 ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳ ՀՅ	Առանց օղակի
	ՇԻՆԱՒ ԳԱՂԱԳ Ի	
26Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱԳ ՀՈՑ	Առանց օղակի
Բ	ՇԻՆԵԱ ԳԱՂԳ Ի ՍԻ	Առիւծը աջ
27Ա	ԿՈՏՆԴԻՆ ԹԱՐ ՀՅ	Առանց օղակի
Բ	ՇԻՆԱՒ Ի ՔԱՂՔ Ի ՍԻ	Առիւծը աջ
28Ա	նոյն	Առանց օղակի
Բ	ՇԻՆԱՒ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ	Տ գիրը առիւծին յետին
		ոտքերուն միջեւ
29	Անորոշ	
30	Անորոշ	
31	Անորոշ	

ԼԵՎՈՆ ԲՈՆԱԿԱԼԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Թիւ	Քաղաք	Կգիք	Դաշտի նշան
32Ա		ԼԵՎՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈ	Թ-2
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի Ս	Թ-2
33Ա	2139	ԼԵՎՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈ	Թ-2
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի Ս	Թ-3
34Ա		նոյն	Թ-2
Բ		նոյն	Թ-3
		կշիռ 1.5855 կրամ Հ. Կ. 9.08	
35Ա		նոյն	Թ-7
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ	Թ չկայ
36Ա		նոյն	35Ա Թ-7
Բ		նոյն	35Բ Թ չկայ
37Ա		նոյն	35Ա Թ-7
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔ Ի ՍԻ	Թ-3
38Ա		նոյն	35Ա Թ-7
Բ		նոյն	Անորոշ
39Ա	2164	ԼԵՎՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ	Թ-5
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻ	Թ-3
		կշիռ 1.748 կրամ Հ. Կ. 9.15	
40Ա	2164	նոյն	39Ա Թ-5
Բ		նոյն	39Բ Թ-3
		կշիռ 1.720 կրամ Հ. Կ. 9.05	
41Ա	2164	նոյն	39Ա Թ-5
Բ		նոյն	39Բ Թ-3
42Ա	2164	նոյն	39Ա Թ-5
Բ		նոյն	Թ-5
		կշիռ 1.649 Հ. Կ. 8.96	
43Ա	2164	նոյն	Թ-2
		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ս	Թ-6
44Ա	2164	նոյն	43Ա Թ-2
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ	Թ-3
45Ա	2164	նոյն	43Ա Թ-2
Բ		նոյն	44Բ Թ-3
46Ա	2164	նոյն	43Ա Թ-2
Բ		նոյն	44Բ Թ-3
47Ա	2164	նոյն	43Ա Թ-2
Բ		նոյն	44Բ Թ-3
		կշիռ 1.829 կրամ Հ. Կ. 8.97	

48Ա	2164	նոյն		Թ-5
Բ		նոյն		Թ-3
		կշիռ 1.7315 կրամ Հ. Կ. 9.04		
49Ա	2164	նոյն	48Ա	Թ-5
Բ		նոյն	48Բ	Թ-3
50Ա	2164	նոյն		Թ-5
Բ		ՇինԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻ		Թ-5
51Ա	2164	նոյն		Թ-5
Բ		ՇինԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-3
52Ա	2164	նոյն	51Ա	Թ-5
Բ		նոյն	51Բ	Թ-3
53Ա		ԼԵՎՈՆ ԹԱԳԱՆՈՐ ՀԱՈՑ		Թ-5
Բ		ՇինԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-3
54Ա		նոյն		Թ-5
Բ		ՇինԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻ		Թ-3
55Ա		նոյն	54Ա	Թ-5
Բ		նոյն	54Բ	Թ-3
56Ա		նոյն	54Ա	Թ-5
Բ		նոյն		Թ-3
57Ա		նոյն	54Ա	Թ-5
Բ		նոյն	56Բ	Թ-3
58Ա		նոյն	54Ա	Թ-5
Բ		նոյն		Թ-5
59Ա		նոյն	54Ա	Թ-5
Բ		նոյն	58Բ	Թ-5
60Ա		նոյն	53Ա	Թ-5
Բ		ՇինԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ	53Բ	Թ-3
61Ա		նոյն		Թ-2
Բ		ՇինԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻ		Թ-3
62Ա		ԼԵՎՈՆ ԹԱԳԱՆՈՐ ՀԱ	Առանց Թ զրի	
Բ		ՇինԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍՍ		Թ-5
63Ա		ԼԵՎՈՆ ԹԱԳԱ		Թ-2
Բ		ՇինԱԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ		Թ-3
64Ա		նոյն	63Ա	Թ-2
Բ		նոյն	63Բ	Թ-3
65Ա		նոյն	63Ա	Թ-2
Բ		նոյն	63Բ	Թ-3
66Ա		ԼԵՎՈՆ ԹԱԳԱՆՈՐ ՀԱՈ		Թ-2
Բ		ՇինԱԼ Ի ՔԱՂԱՔՆ	Առանց Թ զրի	

67Ա	նոյն	66Ա	թ-2
Բ	նոյն	66Բ	Առանց թ դրի
68Ա	Լեւոն ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈ		թ-2
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ա		թ-3
	ԿԶԻՈ 1.6015 ԿՐԱՄ Հ. Կ. 9.07		
69Ա	նոյն	68Ա	թ-2
Բ	նոյն	68Բ	թ-3
70Ա	նոյն	68Ա	թ-2
Բ	նոյն	68Բ	թ-3
71Ա	նոյն	68Ա	թ-2
Բ	նոյն	68Բ	թ-3
	ԿԶԻՈ 1.7155 Հ. Կ. 9.10		
72Ա	նոյն	68Ա	թ-2
Բ	նոյն		Առանց թ դրի
73Ա	նոյն	68Ա	Առանց թ դրի
Բ	նոյն		
	ԿԶԻՈ 1.7155 Հ. Կ. 9.10		
74-75	Անորոշ Լեւոն Դրամներ		
76-81	Անորոշ Լեւոն Դրամներ		

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ Թ-Թ ԳՐԵՐՈՎ

Թիւ	Քննարկում	Կմիք	Թ-Թ Գրեւը
82Ա	ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՐ		թ-1
Բ	ՇԻՆԱԼ ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		թ-5
83Ա	ԿՈՍՏԱՆԴ. ԹԱԳԱՐ ՀՅ		թ-4
Բ	ՇԻՆԱԼ ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		թ-4
84Ա	նոյն	83Ա	թ-4
Բ	նոյն	83Բ	թ-4
	ԿԶԻՈ 1.6465 Հ. Կ. 9.07		
85Ա	նոյն	83Ա	թ-4
Բ	նոյն		Առանց թ դրի
86Ա	նոյն		թ-4
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		թ-5
	ԿԶԻՈ 2.048 Հ. Կ. 9.00		
87Ա	նոյն	86Ա	թ-4
Բ	նոյն	86Բ	թ-5

88Ա	ԿՈՏԱՆԴՆ ԹԱԳԱՄ Հ		Թ-2
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-4
89Ա	նոյն		Թ-2
Բ	նոյն		Թ-4
90Ա	նոյն		Թ-4
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ս		Թ-4
91Ա	ԿՈՏԱՆԴՆ		Թ-5
Բ	ՇԻՆԱԼ ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-5
92Ա	նոյն		Թ-5
Բ	նոյն		Թ-5
93Ա	ԿՈՏԱՆԴՆ		Թ-2
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻ		Թ-5
94Ա	նոյն	93Ա	Թ-2
Բ	նոյն	93Բ	Թ-5
95Ա	ԿՈՏԱՆԴՆ ԹԱԳԱՄ ՀՈ		Թ-4
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-5
96Ա	նոյն	95Ա	Թ-4
Բ	նոյն	95Բ	Թ-5
97Ա	նոյն	95Ա	Թ-4
Բ	նոյն	95Բ	Թ-5
	ԿՀԻՄ 2-052 Հ. Կ. 9-03		
98Ա	նոյն	95Ա	Թ-4
Բ	նոյն	95Բ	Թ-5
99Ա	նոյն	95Ա	Թ-4
Բ	նոյն	95Բ	Թ-5
100Ա	նոյն	95Ա	Թ-4
Բ	նոյն		Թ-5
101Ա	նոյն	95Ա	Թ-4
Բ	նոյն		Թ-5
102Ա	ԿՈՏԱՆԴՆ ԹԱԳԱՄ ՀԱ		Թ-5
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ		Անորոշ
103Ա	նոյն	102Ա	Թ-5
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍՍ		Թ-5
104Ա	նոյն		Թ-2
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ		Թ-5
105Ա	ԿՈՏԱՆԴՆ ԹԱԳԱՄ Հ		Թ-4
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-4
106Ա	նոյն		Անորոշ
Բ	նոյն		Թ-5

107Ա	ԿՈՍԹԱՆԴՆԻ ՔԱԳԱՄ Զ		
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-4
	ԿԶԻՌ 1.784 ԿՐԱՄ Զ. Կ. 8.66		Թ-4
108Ա	նոյն	107Ա	Թ-4
Բ	նոյն	107Բ	Թ-4
109Ա	նոյն	107Ա	Թ-4
Բ	նոյն	107Բ	Թ-4
110Ա	նոյն	107Ա	Թ-4
Բ	նոյն	107Բ	Թ-4
	ԿԶԻՌ 1.488 ԿՐԱՄ Զ. Կ. 9.01		
111Ա	նոյն	107Ա	Թ-4
Բ	նոյն	107Բ	Թ-4
	ԿԶԻՌ 1.557 ԿՐԱՄ Զ. Կ. 9.10		
112Ա	նոյն		Թ-4
Բ	նոյն		Թ-4
	ԿԶԻՌ 1.3065 Զ. Կ. 9.10		
113Ա	ԿՈՍԹԱՆԴՆԻ ՔԱԳԱՄ ԶԾ		Թ-4
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-3
114Ա	նոյն	113Ա	Թ-4
Բ	նոյն	113Բ	Թ-3
	ԿԶԻՌ 1.594 ԿՐԱՄ Զ. Կ. 9.06		
115Ա	նոյն	113Ա	Թ-4
Բ	նոյն		Թ-4
116Ա	նոյն	113Ա	Թ-4
Բ	նոյն		Թ-3
117Ա	նոյն	113Ա	Թ-4
Բ	նոյն		Թ-4
118Ա	նոյն		Թ-4
Բ	նոյն		Թ-3
119Ա	նոյն	118Ա	Թ-4
Բ	նոյն		Թ-4
120Ա	նոյն	118Ա	Թ-4
Բ	նոյն	119Բ	Թ-4
121Ա	նոյն	118Ա	Թ-4
Բ	նոյն		Թ-4
122Ա	նոյն		Թ-3
Բ	նոյն		Թ-5
123Ա	նոյն	122Ա	Թ-3
Բ	նոյն	122Բ	Թ-5
124Ա	նոյն	122Ա	Թ-3

Բ	նոյն		Թ-2
125Ա	նոյն		Թ-4
Բ	նոյն		Թ-3
126Ա	նոյն	125Ա	Թ-4
Բ	նոյն	125Բ	Թ-3
127Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻ ԹԱԳԱՄ	ՀՈ Աստղ մը ձիուն գլխուն վրայ	Թ-5
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-5
128Ա	նոյն	127Ա	Թ-5
Բ	նոյն	127Բ	Թ-5
129Ա	նոյն		Թ-4
Բ	նոյն		Թ-5
130Ա	նոյն		Թ-4
Բ	նոյն		Թ-6
131Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻ ԹԱԳԱՄ		Թ-2
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-5
132Ա	նոյն	131Ա	Թ-2
Բ	նոյն	131Բ	Թ-5
133Ա	նոյն	131Ա	Թ-2
Բ	նոյն	131Բ	Թ-5
134Ա	նոյն	131Ա	Թ-2
Բ	նոյն		Թ-3
135Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻ ԹԱԳԱՄ	ՀՈՑ	Թ-1
Բ	ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ		Թ-5
	Կշիռ 1.516 Կրամ Հ.Կ. 8.87		
136Ա	նոյն	135Ա	Թ-1
Բ	նոյն	135Բ	Թ-5

ԱՆՈՐՈՇ ԿՈՍՏԱՆԴԻՆԻ ԴՐԱՄՆԵՐ Թ-Թ

137Ա	Անորոշ	Աստղ ձիուն գլխուն վրայ	Թ-5
Բ	Անորոշ		Թ-3
	Կշիռ 1.516 Հ. Կ. 8.87		
138Ա	Անորոշ		Թ-1
Բ	Անորոշ		Թ-5
139Ա	Թ-1: 140Ա	Թ-1: 141Ա	Թ-1
Բ	Թ-5: 140Բ	Թ-5: 141Բ	Թ-3

- 142Ա թ-2: նոյն 143Ա - 151Ա:
 Բ թ-2: նոյն 143: 144Բ-145Բ թ-4: 146-150Բ թ-5: 151Բ թ-6
 152Ա թ-4: նոյն 153Ա - 169Ա:
 Բ թ-2: 153Բ-154Բ թ-2: 155Բ-160Բ թ-4: 161Բ-167Բ թ-6:
 168, 169 անորոշ:
 170Ա թ-5: նոյն 171Ա-184Ա:
 178Բ թ-3: 179Բ-182Բ թ-5: 183, 184 անորոշ:
 170Բ-171Բ թ-2: 173-1

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. Ի ԴՐԱՄՆԵՐԸ ՄԻԱՑՆ Ա. ԿՈՂՄԸ
 Մէկ Թ ԳԻՐՈՎ

185Ա	2229	ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՌ ՀԱ	Թ-5
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ս	Առիւծը աջ
		ԿԶԻՆ 1.9135 Հ. Կ. 9.00	
186Ա		նոյն	185Ա թ-5
Բ		նոյն	185Բ Առիւծը աջ
187Ա		նոյն	185Ա թ-5
Բ		նոյն	185Բ Առիւծը աջ
188Ա		նոյն	185Ա թ-5
Բ		նոյն	185Բ Առիւծը աջ
189Ա		նոյն	Թ-5
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ	Առիւծը աջ
190Ա		նոյն	189Ա թ-5
Բ		նոյն	189Բ Առիւծը աջ
191Ա		ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՌ ՀՈՑ	Թ-1
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ	Առիւծը աջ
192Ա		ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՌ Հ	Թ-2
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔ Ս	Առիւծը աջ
193Ա		նոյն	192Ա թ-2
Բ		նոյն	192Բ Առիւծը աջ
194Ա		նոյն	Թ-5
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔ ՍԻՍ	Դաշտին մէջ Տ
195Ա		նոյն	Թ-4
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔ ՍԻ	Առիւծը աջ
196Ա		ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՌ	Թ-1
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ս	Առիւծը աջ
197Ա		նոյն	196Ա թ-1

Բ	նոյն	196Բ Առիւծը աջ
198Ա	նոյն	196Ա Թ-1
Բ	նոյն	196Բ Առիւծը աջ
199Ա	նոյն	Թ-4
Բ	ՇիւնԱԼ Ի ԳԱՂԱԲՆ Խ	Առիւծը աջ
200Ա	ԿՈՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՄ ՀՈՑ	Թ-4
Բ	ՇիւնԵԼ Ի	Դաշտին մէջ Տ
201Ա	ԿՈՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՄ ՀՑ	Թ-5
Բ	ՇիւնԱԼ Ի ԳԱՂԱԲՆ ՍԻ	Առիւծը աջ
202Ա	նոյն	Թ-2
Բ	ՇիւնԱԼ Ի ԳԱՂԱԲՆ ՍԻ	Առիւծը աջ
203Ա	նոյն	Թ-4
Բ	ՇիւնԱԼ Ի	Առիւծը աջ
204Ա - 207Ա	Անորոշ	Թ-5
208Ա - 227Ա	Անորոշ	Թ-4
228Ա - 233Ա	Անորոշ	Թ-2
234Ա - 237Ա	Անորոշ	Թ-1

ԿՈՏԱՆԴԻՆ Դ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ Տ-Տ ԳՐԵՐՈՎ

238Ա	ԿՈՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՄ ՀԱՅՈՑ	Տ-4, 0-7
Բ	ՇիւնԵԼ Ի ԳԱՂԱԲՆ Ի ՍԻՍ	Տ-4, 0-3
239Ա	նոյն	Տ-4, 0-7
Բ	ՇիւնԵԼ Ի ԳԱՂԱԲՆ ՍԻՍ	Տ-4, 0-5
	ԿԶԻՆ 2.575, Հ. Կ. 9.03	
240Ա	նոյն	239Ա Տ-4, 0-7
Բ	նոյն	239Բ Տ-4, 0-5
241Ա	նոյն	239Ա Տ-4, 0-7
Բ	նոյն	239Բ Տ-4, 0-5
	ԿԶԻՆ 1.913 Հ. Կ. 9.01	
242Ա	նոյն	Տ-4, 0-5
Բ	նոյն	Տ-4,
243Ա	Անորոշ	Տ-4, 0-5
Բ	Անորոշ	Տ-4, 0-5
244Ա	ԿՈՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՄ ՀՈՑ	Տ-4, 0-2
Բ	ՇիւնԵԼ ԳԱՂԱԲՆ ՍԻՍ	Տ-4,
245Ա	նոյն	Տ-4, 0-7
Բ	նոյն	Տ-4, 0-5

246Ա		ԿՈՍՏԱՆԴՆԻ ՔԱԳԱՄ Հ		Տ-5
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ		Տ-5
247Ա		նոյն		Տ-4
Բ		նոյն		Տ-4
248Ա		նոյն		Տ-4
Բ		նոյն		Տ-4
249Ա		նոյն		Տ-4
Բ		նոյն		Տ-4
		ԿԶԻՌ 1.752 Հ. Կ. 9.00		Տ-4
250Ա	2190	ԿՈՍՏԱՆԴՆԻ ՔԱԳԱՄ ՀՈՑ		Տ-5
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ		Տ չիւայ
251Ա	2190	նոյն	250Ա	Տ-5
Բ		նոյն		Տ-5
252Ա	2190	նոյն		Տ-5
Բ		ՇԻՆԵԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ		Տ-5
253Ա	2190	նոյն		Տ-5
Բ		նոյն		Տ-4
254Ա	2190	նոյն		Տ-5
Բ		նոյն		Տ-4
255Ա		նոյն		Տ-5
Բ		ՇԻՆԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ		Տ-5
256Ա		նոյն		Տ-5
Բ		նոյն		Տ-5
257Ա		նոյն		Տ-5
Բ		ՇԻՆԵԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ		Տ-5
		ԿԶԻՌ 1.6260 Հ. Կ. 8.97		
258Ա		նոյն	257Ա	Տ-5
Բ		նոյն	257Բ	Տ-5
259Ա		նոյն		Տ-5
Բ		նոյն		Տ-5
260Ա		նոյն	259Ա	Տ-5
Բ		նոյն	259Բ	Տ-5
261Ա		նոյն	259Ա	Տ-5
Բ		նոյն	259Բ	Տ-5
262Ա		նոյն		Տ-4
Բ		ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ		Տ-4
263Ա		նոյն	262Ա	Տ-4
Բ		նոյն		Տ-4
264Ա		նոյն	262Ա	Տ-4

	հոյն		Տ-4
	կշիռ 1.800 Հ. Կ. 9.09	262Ա	Տ-4
265Ա	հոյն		Տ-4
Բ	հոյն		Տ-4, 0-5
266Ա	հոյն		Տ-4
Բ	Շիկեկ Ի ԲԱՂԱԲՆ ՍԻՍ		Տ-4, 0-5
267Ա	հոյն		Տ-4
Բ	հոյն		Տ-4
268Ա	հոյն		Տ-4
Բ	Շիկեկ ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ		Տ-4
	կշիռ 1.888 Հ. Կ. 9.03	268Ա	Տ-4
269Ա	հոյն	268Բ	Տ-4
Բ	հոյն	268Ա	Տ-4
270Ա	հոյն		Տ-4
Բ	հոյն		Տ-4
271Ա	հոյն		Տ-4
Բ	Շիկեկ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	271Ա	Տ-4
272Ա	հոյն	271Բ	Տ-4
Բ	հոյն	271Ա	Տ-4
273Ա	հոյն	271Բ	Տ-4
Բ	հոյն		Տ-4
274Ա	հոյն		Տ-4
Բ	հոյն		Տ-4
	կշիռ 1.6800 կրամ, Հ. Կ. 9.00		Տ-4
275Ա	հոյն		Տ-4
Բ	հոյն	275Ա	Տ-4
276Ա	հոյն	275Բ	Տ-4
Բ	հոյն		Տ-4
277Ա	հոյն		Տ-4
Բ	հոյն	277Ա	Տ-4
278Ա	հոյն	277Բ	Տ-4
Բ	հոյն		Տ-4
279Ա - 300Ա	հոյն բայց անորոշ		Տ-4
279Բ - 300Բ	հոյն բայց անորոշ		Տ-4
301Ա	ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳՈՐ ՀՈՑ		Տ-4, 0-7
Բ	Շիկեկ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ		Տ-4
302Ա	հոյն		Տ-4
Բ	Շիկեկ Ի ԲԱՂԱԲՆ Ի ՍԻՍ		Տ-4
303Ա	ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳՈՐ ՀՈՑ		Տ-5
Բ	Շիկեկ Ի ԲԱՂԱԲՆ ՍԻՍ		Տ-5

304Ա	հշիւ 1.6300 հրամ, Հ. Կ. 8.8	
Բ	նոյն	Տ-4
	նոյն	Տ-4
305Ա	հշիւ 1.5855 հրամ, Հ. Կ. 9.3	
Բ	ԿՈՍՏԱՆԴՆԻՆ ԹԱԳԱՄ ՀԱՈՑ	Տ-4, 0-7
	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	Տ-4, 0-5
306Ա	նոյն	Տ-4, 0-5
Բ	նոյն	Տ-4, 0-5
307Ա 2185	ԿՈՍՏԱՆԴՆԻՆ ԹԱԳԱՄ	Տ-4, 0-5
Բ	նոյն	Տ-4
308Ա	նոյն	Տ-4
Բ	ՇԻՆԱԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	Տ-4
309Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻՆ ԹԱԳԱՄ ՀՑ	Տ-5
Բ	ՇԻՆԱԼ Ի ԳԱՂԱԳ ՍԻ	Տ-5
310Ա	նոյն	Տ-5
Բ	նոյն	Տ-5
	հշիւ 1.4965 հրամ, Հ. Կ. 9.10	
311Ա 2215	ԿՈՍՏԱՆԴՆԻՆ ԹԱԳԱՄ ՀՈՑ	Տ-4
Բ	ՇԻՆԱԼ Ի ԳԱՂԱԳՆ ՍԻՍ	Տ-4
312Ա 2215	նոյն	Տ-4
Բ	նոյն	Տ-4
313Ա 2215	նոյն	Տ-4
Բ	նոյն	Տ-4
314Ա	նոյն	Տ-4
Բ	նոյն	Տ-4
315Ա	նոյն	Տ-4
Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ ՍԻՍ	Տ-4
316Ա	նոյն	315Ա Տ-4
Բ	նոյն	Տ-4
317Ա	նոյն	Տ-4
Բ	նոյն	Տ-4
318Ա	նոյն	Տ-4
Բ	նոյն	Տ-4
319Ա	նոյն	Տ-4
Բ	նոյն	Տ-4
320Ա	նոյն	Տ-4
Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱՆ Ի ՍԻՍ	Տ-4

321Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ ՔԱԳՐՈՐ ՀՈՑ	Տ-4
Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	Տ-4
	ԿՀԻՌ 1.7900 ԿՐԱՄԺ, Հ. Կ. 9.00	
322Ա	ՆՈՅՆ	Տ-4
Բ	ՆՈՅՆ	Տ-4
323Ա	ՆՈՅՆ	322Ա Տ-4
Բ	ՆՈՅՆ	322Բ Տ-4
324Ա - 326Ա	ՆՈՅՆ	Տ-4
324Բ - 326Բ	ՆՈՅՆ	Տ-4
327Ա	ՆՈՅՆ	Տ-5
Բ	ՆՈՅՆ	Տ-5
328Ա - 330Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ ՔԱԳՐՈՐ ՀՈՑ	Տ-4
Բ - Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ ՍԻՍ	Տ-4
	ԿՀԻՌ 2.0025 ԿՐԱՄԺ, Հ. Կ. 9.27	
331Ա	ՆՈՅՆ	Տ-5
Բ	ՆՈՅՆ	Տ-5
332Ա - 333Ա	ՆՈՅՆ	Տ-5
Բ - Բ	ՇԻՆԵԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ	Տ-5
334Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ ՔԱԳՐՈՐ ՀՈՑ	Տ-5
Բ	ՇԻՆԵԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ	Տ-4
335Ա	ՆՈՅՆ	Տ-4
Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	Տ-4
336Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ ՔԱԳՐՈՐ ՀԱՅՈՑ	Տ-5
Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	Տ-5
337Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ ՔԱԳՐՈՐ ՀՈՑ	Տ-4
Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	Տ-4
338Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ ՔԱԳՐՈՐ ՀՈՑ	Տ-7
Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	Անորոշ
339Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ ՔԱԳՐՈՐ Ց	Տ-4
Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	Տ-4
340 - 547	ՉԱՆԱՉԱՆ Տ - Տ ԳՐԵՐՈՎ ԱՆՈՐՈՇ ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ Դ.Ի ԴՐԱՄԵՆԵՐ	

ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ Դ.Ի ԴՐԱՄԵՆԵՐԸ Լ-Լ ԳՐԵՐՈՎ

548Ա	ԿՈՍՏԱՆԴՆԻՆԻ ՔԱԳՐՈՐ ՀՈՑ	Լ-4
Բ	ՇԻՆԵԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ	Լ-4

549Ա		նոյն		548Ա	Լ-4
Բ		նոյն			Լ-4
550Ա		նոյն			Լ-4
Բ		նոյն			Լ-4
		կշիռ 1.8805	Հ. Կ. 9.15		
551Ա - 555Ա		նոյն			Լ-4
Բ - Բ		նոյն			Լ-4
556Ա		նոյն			Լ-4
Բ		ՇիւնԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ			Լ-5
		կշիռ 1.8535	Հ. Կ. 9.24		
557Ա - 558Ա		նոյն			Լ-4
Բ - Բ		նոյն			Լ-5
559Ա		ԿՈՍՏԵՆԴՆ ԹԱԳՈՐ ՀՅ			Լ-5
Բ		ՇիւնԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ			Լ-5
		կշիռ 1.769	կրամ, Հ. Կ. 9.12		
560Ա - 564Ա		նոյն			Լ-5
Բ - Բ		նոյն			Լ-5
565Ա	2188	ԿՈՍՏԵՆԴՆ ԹԱԳԱՈՐ Հ			Լ-5
Բ		ՇիւնԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻ			
566Ա	2188	նոյն			Լ-5
Բ		նոյն			Լ-5
567Ա		նոյն			Լ-5
Բ		ՇիւնԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ			Լ-5
568Ա		ԿՈՍՏԵՆԴ ԹԱԳՈՐ ՀՈՑ			Լ-4
Բ		ՇիւնԱԼ Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ			Լ-4
		կշիռ 1.671	կրամ, Հ. Կ. 9.00		
569Ա - 570Ա		նոյն			Լ-4
Բ - Բ		նոյն			Լ-4
571Ա		ԿՈՍՏԵՆԴՆ ԹԱԳԱՈՐ ՀՅ			Լ-5
Բ		ՇիւնԱԼ ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ			Լ-4
572Ա	2209	ԿՈՏԵՆԴՆ ԹԳ ՀՅ			Լ-5
Բ		ՇիւնԱ Ի ՔԱՂԱՔ Ս			Լ-5
573Ա	2209	նոյն			Լ-5
Բ		ՇիւնԱ Ի ՔԱՂԱՔ ՍԻՍ			Լ-5
574Ա		ԿՈՍՏԵՆԴՆ ԹԱԳՈՐ ՀՈՑ			Լ-4
Բ		ՇիւնԱԼ ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ			Լ-4
		կշիռ 1.730	Հ. Կ. 9.20		

575Ա - 576Ա

Բ - Բ

577Ա - 578Ա

Բ - Բ

579 - 611

հոյն

հոյն

հոյն

Շինել ԳԱՂԱՔՆ ՍԻՍ

ԶԱՆԱԶԱՆ Լ-Լ ԳՐԵՐՈՎ ԱՆՈՐՈՇ
ԿՈՍՏԱՆԴՆԻ Դ.Ի ԴՐԱՄՆԵՐ

Լ-4

Լ-4

Լ-4

Լ-4

ԴԱՇՏԻ ԳՐԵՐԸ ԽԱՌՆՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐ

612Ա

Բ

613Ա

Բ

614Ա

Բ

615Ա

Բ

616Ա

Բ

617Ա

Բ

618Ա

ԿՏԸՆԴ

Անորոշ

ԿՈՍՏ

ՀՈՑ

Շինել Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ

ԿԶԻՆ 1.4780 Հ. Կ. 9.06

ԿՈՍՏ

ՀՑ

Շինել Ի ԳԱՂԱԳՆ

Կ

ԹԱԳ

ՀՈՑ

ԿՈՏԸՆԴ

ՀՈՑ

Շինել Ի ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ

ԹԱԳԻ ՀՈՑ

Շին

ԻՍ

ԿՈՍՏԸՆԴ ԹԱԳԻ ՀՈՑ

ԱՂԱԳՆ ՍԻՍ

ԿԶԻՆ 1.6430 Հ. Կ. 9.00

Թ-4

Տ-4

Թ-4

Տ-4

Տ-4

Լ-4

Տ-4

Լ-5

Լ-4

Տ-4

Լ-4

Տ-4

Տ-4

ԹԱԳԱԻՈՐԸ ԶԻՈՎ ԶԱԽ ԴԱՐՁԱԾ

619Ա

Բ

Անորոշ

Անորոշ

ՅԵՏ ՌՈՒԲԵՆԵԱՆԻ ՆՄԱՆՈՂ ԴՐԱՄՆԵՐ

620Ա

Բ

Անորոշ

Անորոշ

02.02.00 1.000.00 1.000.00

621Ա

Բ

ՀՀԻՌ 1.445 Հ. Կ. 7.22

Անորոշ

Անորոշ

ՀՀԻՌ 1.2420 Հ. Կ. 7.6

ԱՆՈՐՈՇ ԴՐԱՄՆԵՐ

622 - 636

Մաշած անորոշ դրամներ որ հը պատկանին
այս դրամագիրտին

AN IMPORTANT FIND OF COINS PERTAINING
TO CONSTANTINE III, LEVON THE TYRANT
AND CONSTANTINE IV OF CILICIA

ZAREH BEDOUKIAN

About ten years ago, a find, consisting of 636 coins, was bought in Constantinople. It remains uncertain as to when and where the find was originally located. The find then became the property of a New Yorker, Mr. Gevrekian. At present, only a small part of it remains in the possession of both Mr. Gevrekian and the writer of this article.

The coins of this find were minted by the three kings of the last period of the Armenian Kingdom of Cilicia — Constantine III, Levon the Tyrant, and Constantine IV — who ruled from 1344 to 1373. A study of the find results in certain revisions of the history of the time these kings were in power. It can also be asserted that the royalty minted coins that contained little silver, and were therefore discrepant in value with reference to other silver coins.

